ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «7» մայիս 2024թ N 1233-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 1000-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի հունիսի 9-ի ««ՏԵՍՏՎՅԱԶ» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման

գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1000-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետում «N 056/T-085) N 1/Y1-B հավելվածով» բառերը փոխարինել «N 056/T-115) N 1 և N 2 հավելվածներում» բառերով:

2) Հրամանի 2-րդ կետում «հավատարմագրման տեխնիկական կոմիտեի կողմից հետագա հավատարմագրման կամ հավատարմագրման մերժման մասին համապատասխան որոշման ընդունումը» բառերը փոխարինել ««03» օգոստոս 2027թ.» բառերով:

3) Հրամանի 2-րդ կետում «2023» թիվը փոխարինել «2024» թվով:

2. «ՏԵՍՏՍՎՅԱԶ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական Փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված Թիվ LI003193 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից 1 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

3. Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-34 վկայականը վերածևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական՝ Ն-34 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-34 (H-34) 2024:

4. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փոփոխությունները գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Հովակիմյանին:

2024-06-05 19:18:43 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ